

Բնապահպանության նախարարությունը, որը հանդես է գալիս ՀՀ կառավարության անունից, ի դեմս գլխավոր քարտուղարի Ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է բնապահպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Նվիրաբերող»), մի կողմից, «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը, ի դեմս մասնաճյուղի տնօրեն Ն.Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Նվիրաբերություն ստացող»), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով «Նվիրաբերող»-ը «Նվիրաբերություն ստացող»-ին է հատկացնում 7 000 000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ՝ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղին գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերի ֆինանսավորման համար:

2. Նվիրաբերության գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

- 2.1. Պայմանագրով տրամադրված միջոցները պետք է ծախսվեն պայմանագրի 1-ին կետում նշված ծախսերի կատարման վրա:
- 2.2. «Նվիրաբերություն ստացող»-ը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի գործող օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխան՝ ապահովելով նվիրաբերված ֆինանսական միջոցների օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվարկ: «Նվիրաբերություն ստացող»-ը ապահովում է սույն պայմանագրի 1-ին կետում նշված ծախսերին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու «Նվիրաբերող»-ի ներկայացուցչի հնարավորությունը:
- 2.3. Դրամական միջոցների փոխանցումը «Նվիրաբերություն ստացող»-ի հաշվին իրականացվում է սույն պայմանագիրն ստորագրելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Հաշվետվություն

3.1. «Նվիրաբերություն ստացող»-ը սույն պայմանագրով նախատեսված պայմանագրի 1-ին կետում նշված ծախսերի կատարման ավարտից հետո 15 օրվա ընթացքում «Նվիրաբերող»-ին է ներկայացնում կատարման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով կատարված իրականացված ծախսերի նկարագիրը:

4. Պայմանագրի ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

5. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 5.1. Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված ֆինանսական միջոցներն օգտագործումը «Նվիրաբերող»-ի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, այն կարող է օգտագործվել այլ նպատակով միայն «Նվիրաբերող»-ի համաձայնությամբ, իսկ «Նվիրաբերող»-ի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով:
- 5.2. Եթե «Նվիրաբերություն ստացող»-ը նվիրաբերած ֆինանսական միջոցները օգտագործել է «Նվիրաբերող»-ի սահմանած նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է սույն կետի 5.1. ենթակետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա «Նվիրաբերող»-ը կամ նրա իրավահաջորդն իրավունք ունեն պահանջել նվիրաբերության վերացում:



6. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

- 6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:
- 6.2. «Նվիրաբերություն ստացող»-ն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված նվիրաբերությունից: Այդ դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:
- 6.3. «Նվիրաբերող»-ը կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոփոխել սույն պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով «Նվիրաբերություն ստացող»-ին:

7. Այլ պայմաններ

- 7.1. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆՎԻՐԱԲԵՐՈՂ

Բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
 ՖՆ գործառնական վարչություն ՀՀ
 900011006278
 ՀՎՀՀ 02507198

Բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ

Վ.Զիլավյան




ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏՍՅՈՂ

«Կովկասի տարածաբջջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ

ք.Երևան, Այգեստան 7/2
 «Ամերիաբանկ» ՓԲԸ
 ՀՀ 1570011701230100
 ՀՎՀՀ 01551446

Մասնաճյուղի տնօրեն

Ն.Հայրապետյան



[Handwritten signature]

